Հրատարակվում է

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ
ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ

SPONSORED BY
THE COUNCIL OF EUROPE

PDF created with pdfFactory Pro trial version www.pdffactory.com

ASSOCIATION OF JUDGES OF THE REPUBLIC OF ARMENIA

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

COLLECTION OF JUDGMENTS

Edited by Alvina Gyulumyan
Member of the Constitutional Court of the Republic of Armenia,

PDF created with pdfFactory Pro trial version www.pdffactory.com

President of the Association of Judges of the RA

YEREVAN 2002

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՎՃԻՌՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀՀ սահմանադրական դատարանի անդամ,
ՀՀ Դատավորների միության նախագահ
Ալվինա Գյուլումյանի ընդհանուր խմբագրությամբ

PDF created with pdfFactory Pro trial version www.pdffactory.com

ԵՐԵՎԱՆ 2002

Տպագրվում է ՀՀ Դատավորների միության
խորհրդի որոշմամբ

Խմբագիր

ՀՀ սահմանադրական դատարանի
աշխատակազմի գլխավոր մասնագետ
Լիանա Հակոբյան

PDF created with pdfFactory Pro trial version www.pdffactory.com

Վճիռներն անգլերենից թարգմանել են.

Լուսինե Պողոսյանը
Մարինա Մխիթարյանը
Կարինե Բալայանը
Սոնա Հովհաննիսյանը
Վահե Ենգիբարյանը
Աննա Ղազարյանը

PDF created with pdfFactory Pro trial version www.pdffactory.com

ՏԵՅՔՍԵՅՐԱ ԴԵ ԿԱՍՏՈՆ ԸՆԴԴԵՄ ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ ԳՈՐԾԸ

CASE OF TEIXEIRA DE CASTRO v. PORTUGAL
(Գանգատ թիվ 44/1997/828/1034)

Դատարանի 1998թ. հունիսի 9-ի

Վճիռը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը,

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի («Կոնվենցիա») 43-րդ հոդվածի և Դատարանի B կանոնակարգի համապատասխան դրույթների համաձայն, նիստ գումարելով որպես Պալատ՝ դատավորների հետևյալ կազմով.

պրն Ռ. Բերնհարդտ, Նախագահ, պրն Ա. Սպիլման, պրն Ն. Վալտիկոս, տկն Է. Պալմ, պրն Ի. Ֆոյգել, պրն Ա. Ն. Լոյզու, պրն Մ. Ա. Լոպես Ռոչա, պրն Բ. Ռեպիկ, պրն Վ. Բուտկևիչ,

և նաև պրն Հ. Պետցոլդ, Քարտուղար, և պրն Պ. Ջ. Մահոնեյ, Քարտուղարի տեղակալ,

1998թ. մարտի 26-ի և մայիսի 18-ի դռնփակ խորհրդակցություններից հետո,

1998թ. մայիսի 18-ին ընդունել է հետևյալ վճիռը.

ՎԱՐՈՒՅԹԸ

1. Գործը Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի կողմից («Հանձնաժողով») և Պորտուգալիայի կառավարության կողմից («Կառավարություն») Կոնվենցիայի 32-րդ հոդվածի 1-ին կետով և 47-րդ հոդվածով սահմանված եռամսյա ժամկետում Դատարան է հանձնվել համապատասխանաբար 1997թ. ապրիլի 16-ին և 1997թ. հունիսի 17-ին: Գործի համար առիթ է հանդիսացել Կոնվենցիայի 25-րդ հոդվածի հիման վրա 1994թ. հոկտեմբերի 24-ին Պորտուգալիայի քաղաքացի պրն Ֆրանսիսկո Տեյքսեյրա դե Կաստրոյի կողմից Պորտուգալիայի Հանրապետության դեմ Հանձնաժողով ներկայացված գանգատը (թիվ 25829/94):

Հանձնաժողովի առաջարկը հիմնվում էր 44-րդ և 48-րդ հոդվածների և Պորտուգալիայի այն հայտարարության վրա, որով նա ճանաչում էր Դատարանի պարտադիր իրավազորությունը (46-րդ հոդված): Կառավարության գանգատը հիմնված էր 48-րդ հոդվածի վրա: Հանձնաժողովը և Կառավարությունն առաջարկել են որոշել, թե արդյո՞ք գործի հանգամանքները վկայում են պատասխանող պետության կողմից Կոնվենցիայի 3-րդ հոդվածով, 6-րդ հոդվածի 1-ին կետով և 8-րդ հոդվածով նախատեսված իր պարտավորությունների խախտման մասին:

PDF created with pdfFactory Pro trial version www.pdffactory.com

2. Դատարանի կանոնակարգի 33-րդ կանոնի 3(d) կետի համաձայն կատարված հարցմանն ի պատասխան՝ դիմողը հայտնել է, որ ցանկանում է մասնակցել դատաքննությանը և նշանակել է իր շահերը ներկայացնող փաստաբանի (31-րդ կանոն): Նախագահը փաստաբանին իրավունք է տվել օգտագործած պորտուգալերենը (28-րդ կանոնի 3-րդ կետ):

3. Պալատի կազմում ընդգրկված էին ex officio պրն Մ. Ա. Լոպես Ռոչան՝ Պորտուգալիայից ընտրված դատավորը (Կոնվենցիայի 43-րդ հոդված) և պրն Ռ. Ռիսդալը՝ Դատարանի նախագահը (21-րդ կանոնի 3-րդ (b) կետ):
1997թ. ապրիլի 28-ին Նախագահը, Քարտուղարի ներկայությամբ, վիճակահանությամբ ընտրել է մյուս յոթ անդամներին, այն է՝ պրն Ա.Սպիլմանին, պրն Ն. Վալտիկոսին, տկն Է. Պալմին, պրն Ի. Ֆոյգելին, պրն Ա. Ն. Լոյզուին, պրն Բ. Ռեպիկին և պրն Վ. Բուտկևիչին (Կոնվենցիայի 43-րդ հոդված և Կանոնակարգի 21-րդ կանոնի 4-րդ կետ): Հետագայում պրն Ռ.Բերնհարդտը՝ Դատարանի նախագահի տեղակալը, փոխարինել է պրն Ռիսդալին, որը մահացել է 1998թ. փետրվարի 18-ին (21-րդ կանոնի 6-րդ կետի 2-րդ ենթակետ):
4. Պրն Ռիսդալը՝ որպես Պալատի նախագահ (21-րդ կանոնի 6-րդ կետ), Քարտուղարի միջոցով, ընթացակարգի կապակցությամբ խորհրդակցել է Կառավարության ներկայացուցչի, Հանձնաժողովի պատվիրակի և դիմողի փաստաբանի հետ (39-րդ կանոնի 1-ին կետ և 40-րդ կանոն): Կատարված կարգադրության հիման վրա, Քարտուղարը 1997թ. հոկտեմբերի 20-ին և հոկտեմբերի 22-ին համապատասխանաբար ստացել է Կառավարության և դիմողի գրավոր բացատրությունները: Գրավոր բացատրությունները ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 1997թ. նոյեմբերի 12-ին և դեկտեմբերի 5-ին տրված երկու փաստաթղթերով դիմողը ներկայացրել է Կոնվենցիայի 50-րդ հոդվածի առնչությամբ իր պահանջները: 1998թ. մարտի 26-ին Դատարանը, այնուամենայնիվ, որոշել է քննության առնել այդ պահանջները: 1997թ. նոյեմբերի 17-ին Հանձնաժողովի քարտուղարը Դատարանի քարտուղարին տեղեկացրել է, որ պատվիրակն իր դիտողությունները կներկայացնի լսումների ժամանակ:

5. 1997թ. նոյեմբերի 16-ին պրն Ռիսդալը թույլատրել է Լոնդոնում կենտրոնական գրասենյակ ունեցող՝ մարդու իրավունքների հարցերով զբաղվող «Արդարադատություն» հասարակական կազմակերպությանը ներկայացնել իր գրավոր դիտողությունները՝ (դրանք պետք է քարտուղարություն ուղարկվեն մինչև 30.01.88թ.) պայմանով, որ դրանք համապատասխանեն որոշակի պահանջների:

PDF created with pdfFactory Pro trial version www.pdffactory.com

6. 1998թ. հունվարի 30-ին Նախագահի կարգադրությունների հիման վրա Քարտուղարի ներկայացրած պահանջին ի պատասխան՝ Հանձաժողովը ներկայացրել է իր կողմից քննված գործը:

7. Նախագահի որոշման համաձայն՝ դռնբաց նիստը տեղի է ունեցել Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում,1998թ. մարտի 24-ին: Մինչ այդ Դատարանն անց էր կացրել նախապատրաստական նիստ:

Դատարանում կողմերին ներկայացնում էին՝
ա) Կառավարությունը.
պրն Ա. Հենրիկես Գասպարը,
Գլխավոր դատախազի տեղակալ, ներկայացուցիչ,

պրն Սիմաս Սանտոսը,
Գլխավոր դատախազի տեղակալ,
Գերագույն դատարան
(Քրեական բաժանմունք), խորհրդատու,

բ) Հանձնաժողովը՝
պրն Ի. Կաբրալ Բարետոն, պատվիրակ,

գ) դիմողին՝
պրն Ջ. Լույրերոն և
օր. Ռ. Մալվար Լույրերոն,
երկուսն էլ Վիլա Նովա դե Ֆամալիկաոյի
փաստաբաններից, փաստաբաններ:

Դատարանը լսել է պրն Կաբրալ Բարետոյի, պրն Լույրերոյի, պրն Հենրիկես Գասպարի և պրն Սիմաս Սանտոսի ելույթները:

ՓԱՍՏԵՐԸ

I. Գործի հանգամանքները

8. Պրն Ֆրանսիսկո Տեյքսեյրա դե Կաստրոն՝ Պորտուգալիայի քաղաքացի, ծնվել է 1955թ. և բնակվում է Կամպելոսում: Գործին առնչվող ժամանակահատվածում նա աշխատում էր տեքստիլ ֆաբրիկայում: Բանտից ազատվելուց հետո նա աշխատանք չի գտել:

A. Երկու ոստիկանների միջամտությունը և դիմողի ձերբակալությունը

9. Թմրանյութերի առևտուրը վերահսկելու գործողությունների կապակցությամբ Հասարակական անվտանգության ոստիկանության (PSP) երկու ծպտյալ ոստիկաններ՝ Ֆամալիկաոյի ոստիկանությունից, տարբեր առիթներով մոտեցել են ոմն Վ. Ս. –ի: Նա կասկածվում էր թմրանյութերի մանր առևտրի մեջ, մասնավորապես, իր սեփական գործածության համար թմրանյութի՝ հիմնականում հաշիշի, համար վճարելու համար: Ոստիկանները մտադիր են եղել Վ. Ս.-ի միջոցով պարզել թմրանյութերի մատակարարին և առաջարկել են նրանից գնել մի քանի կիլոգրամ հաշիշ: Չիմանալով, որ նրանք ոստիկանության աշխատակիցներ են, Վ. Ս.-ն համաձայնել է մատակարար գտնել: Այնուամենայնիվ, չնայած երկու ոստիկանների ճնշմանը՝ նա չի կարողացել գտնել որևէ մեկի:

PDF created with pdfFactory Pro trial version www.pdffactory.com

10. 1992թ. դեկտեմբերի 30-ին՝ կեսգիշերից փոքր ինչ վաղ երկու ոստիկանները գնացել են Վ. Ս.-ի տուն՝ ասելով, որ ցանկանում են հերոին գնել: Վերջինս նշել է Ֆրանսիսկո Տեյքսեյրա դե Կաստրոյի անունը՝ որպես մի անձ, ով կարող է հերոին գտնել, սակայն, նա չգիտեր նրա հասցեն և պետք է այն ձեռք բերեր ոմն Ֆ. Օ.-ից: Այնուհետև նրանք չորսով գնացել են դիմողի տուն՝ հերոին գնել ցանկացողների մեքենայով: Ֆ. Օ.-ի կանչով դիմողը դուրս է եկել տնից և նստել մեքենան, որի մեջ նրան Վ. Ս.-ի հետ սպասում էին երկու ոստիկանները: Վերջիններս ասել են, որ ցանկանում են գնել 20 գրամ հերոին՝ 200.000 էսկուդոյով (PTE) և ներկայացրել են Պորտուգալիայի բանկի չեկեր:

11. Պրն Տեյքսեյրա դե Կաստրոն համաձայնվել է հերոին տրամադրել, Ֆ.Օ.-ի հետ, իր մեքենայով, գնացել է մեկ ուրիշի՝ Ջ. Պ. Օ.-ի տուն: Վերջինս մեկ ուրիշից ձեռք է բերել երեք սաշետ հերոին, մեկը՝ 10 գրամ, մյուս երկուսը՝ 5-ական գրամ կշռով, և վերադառնալով այն տվել է դիմողին. թեև հերոինի ճշգրիտ գինը հայտնի չէ, սակայն դրա դիմաց վճարված գումարը գերազանցել է 100.000 PTE-ն:

12. Դիմողն այնուհետև թմրանյութը տարել է Վ. Ս.-ի տուն, վերջինս այդ ժամանակ վերադարձել էր այնտեղ, և երկու ոստիկանները սպասում էին դրսում: Գործարքը տեղի է ունեցել տանը: Երկու ոստիկանները Վ. Ս.-ի հրավերով մտել են տուն, դիմողը մի սաշետը հանել է գրպանից, և այդ պահին էլ երկու ոստիկանները բացահայտել են իրենց ինքնությունը և ձերբակալել դիմողին, Վ. Ս.-ին և Ֆ. Օ.-ին՝ ժամը 2-ից քիչ առաջ: Նրանք խուզարկել են երեքին էլ և դիմողի մոտ հայտնաբերել են մյուս երկու սաշետները, կանխիկ 43.000 PTE և ոսկյա ապարանջան:

Բ. Վարույթի զարգացումը

1. Նախնական քննություն

13. Դիմողն այնուհետև բերվել է քննող դատավորի մոտ՝ Ֆամալիկաոյի քրեական դատարանում, և կալանավորվել է մինչև դատաքննությունը:

14. 1993թ. հունվարի 29-ին նա դիմել է իրեն կալանքից ազատելու խնդրանքով: Նա վիճարկել է, որ իր կալանավորումն անօրինական է և խախտում է Կոնվենցիայի 3-րդ, 6-րդ և 8-րդ հոդվածները: Ըստ նրա՝ իր կալանավորումը եղել է երկու ոստիկանների անբարոյական և անօրինական վարքագծի արդյունք, քանի որ ինքը հանցագործություն է գործել սոսկ և բացառապես նրանց դրդմամբ: Նրանք գործել են որպես «սադրիչ գործակալներ», մասնավորապես, քանի որ նրանք չեն իրականացրել թմրանյութերի առևտրի դեմ ուղղված գործողություններ՝ դատարանի կարգադրության հիման վրա:

15. Քննող դատավորը 1993թ. փետրվարի 16-ի որոշմամբ մերժել է այդ դիմումը, որն անփոփոխ է մնացել Օպորտոյի վերաքննիչ դատարանի որոշմամբ:

16. Դիմողը habeas corpus-ի երկու դիմում է ներկայացրել Գերագույն դատարան, որոնք մերժվել են 1993թ. մարտի 11-ին և մայիսի 13-ին: Գերագույն դատարանը մայիսի 13-ի իր որոշման մեջ նշել է՝ չնայած նրան, որ երկու ոստիկանները գործել են որպես «սադրիչներ» հերոինի առևտրում, այնուամենայնիվ, դիմողի կալանավորումն արդարացվում էր նրանով, որ ոստիկանները նրա մոտ են գտել հերոինը:

17. 1993թ. օգոստոսի 26-ին ներկայացրել է իր միջնորդությունները դիմողի և Վ. Ս.-ի առնչությամբ: Նա մեղադրանք չի ներկայացրել ընդդեմ մյուս երկուսի՝ Ֆ. Օ.-ի և Ջ. Պ. Օ.-ի:

PDF created with pdfFactory Pro trial version www.pdffactory.com

18. Գործն ուղարկվել է Սանտո Տիրսոյի քրեական դատարան:

2. Դատաքննությունը և վերաքննությունը

ա/ Սանտո Տիրսոյի քրեական դատարանում

19. Նիստը տեղի է ունեցել 1993թ. նոյեմբերի 25-ին, որի ընթացքում հարցաքննվել են մի քանի վկաներ, այդ թվում՝ երկու ոստիկանները և Ֆ.Օ.-ն:

20. 1993թ. դեկտեմբերի 6-ին դատարանը մեղավոր է ճանաչել դիմողին և դատապարտել 6 տարվա ազատազրկման: Դատարանը Վ. Ս.-ին՝ որպես պատժամիջոց, նշանակել է 20 օրվա ազատազարկմանը համարժեք տուգանք: Դատարանը գտել է, որ «ծպտյալ» գործակալների կամ նույնիսկ «սադրիչ գործակալների» օգտագործումը չի արգելվում ներպետական օրենսդրությամբ, պայմանով, որ մեղադրյալի անձնական ազատության սահմանափակումն արդարացվում է այնպիսի արժեքներով, որոնք գերակայում են այդ ազատության նկատմամբ: Քանի որ դիմողին սկզբում մոտեցել է Ֆ.Օ.-ն, PSP աշխատակիցների վարքագիծը «վճռորոշ» չի եղել հանցագործության կատարման համար: Դատարանը նշել է, որ ինքն իր եզրահանգմանը եկել է վկաների, Ֆ. Օ.-ի, Վ. Ս.-ի՝ հանցակցի, դիմողի, իսկ «հիմնականում՝» երկու ոստիկանների վկայությունների հիման վրա:

բ/ Գերագույն դատարանում

21.1993թ. դեկտեմբերի 14-ին դիմողն այդ որոշումը գանգատարկել է Գերագույն դատարան: Նա գանգատվել է ընդդեմ իր՝ արդար դատաքննության իրավունքի խախտման՝ և, inter alia, հիմնվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի վրա:

22. 1994թ. մայիսի 5-ի դատավճռով Գերագույն դատարանը մերժել է նրա գանգատը և անփոփոխ է թողել գանգատարկված դատավճիռը՝ նշելով.

« Տվյալ գործում անվիճելի է, որ PSP աշխատակիցները չափազանց ճնշում են գործադրել՝ մինչև հասել են Ֆրանսիսկո Տեյքսեյրա դե Կաստրոյին: Սակայն, միայն դա պետք է լիներ բնական ընթացքը: Ոստիկանները գիտեին, որ Վ. Ս.-ն թմրանյութ է օգտագործում և փորձում էին բացահայտել նրան թմրանյութ մատակարարողին: Քանի որ հաշիշ չկար, նրանք փորձել են ձեռք բերել հերոին, և հանդիպել են Ֆրանսիսկո Տեյքսեյրա դե Կաստրոյին, որը համաձայնել է նրանց կեղծ առաջարկներին, քանի որ նպատակ է ունեցել շահույթ ստանալ այդ գործարքից՝ շահարկելով մեր օրերի մեծագույն պատուհասը...

PSP աշխատակիցների համառությունը տվել է իր արդյունքը, քանի որ նրանք կարողացել են ձերբակալել դիմողին՝ զգալի քանակությամբ թմրանյութ ունենալու համար:

Ավելին, որպես Ֆամալիկաոյի ոստիկանատան՝ Հասարակական անվտանգության ոստիկանության աշխատակիցներ՝ ոստիկանները ... գործել են իբրև քրեական հետաքննիչներ (Քրեական դատավարության օրենսգրքի 1-ին հոդված)՝ այն օրենքով իրենց վերապահված լիազորությունների հիման վրա, որը նրանց հնարավորություն է տալիս առանց ավելի բարձր մարմինների դիմելու՝ ձեռք բերել տեղեկատվություն հանցագործությունների մասին, պարզել հանցագործների ինքնությունը և ձեռնարկել ցանկացած քայլ, որն անհրաժեշտ և անհետաձգելի է ապացույցներ հավաքելու համար (Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ կետ):

...

PDF created with pdfFactory Pro trial version www.pdffactory.com

Ոստիկանության աշխատակիցները ... քրեական գործի վարույթում գործում են որպես դատարանի պաշտոնյաներ, սակայն դա չի խոչընդոտում նրանց, օրենքով հատուկ սահմանված հանգամանքներում, իրենց չպատվիրակված լիազորություններն իրականացնելու ընթացքում ձեռնարկել դատավարական քայլեր:

Ինչպես նկատել է դատախազը, PSP աշխատակիցները գործել են օրենքի շրջանակներում, և ձեռք բերած ապացույցը նրանց վարքագիծը չի դարձնում անընդունելի:

Այս հանգամանքներից ելնելով՝ Ֆրանսիսկո Տեյքսեյրա դե Կաստրոյի բողոքը լիովին անհիմն է:

Այս հետևություններից ելնելով՝ Գերագույն դատարանը մերժում է բողոքը և հաստատում է բողոքարկված դատավճռի բոլոր դրույթները»:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. 1983թ. դեկտեմբերի 13-ի թիվ 430/83 օրենքի ուժ ունեցող հրամանագիրը

23. Թմրանյութերի առևտուրը կանխելու մասին 1983թ. դեկտեմբերի 13-ի թիվ 430/83 օրենքի ուժ ունեցող հրամանագրի համապատասխան դրույթները նախատեսում են.

Հոդված 23, կետ 1
«Յուրաքանչյուր, ոք, ով առանց օրինական թույլտվության ածեցնում, արտադրում, արդյունաբերում, մատակարարում, վաճառքի է հանում, վաճառում, բաշխում, գնում կամ, որևէ կարգավիճակով, ստանում, այլ անձանցից ձեռք է բերում, տեղափոխում, ներմուծում է երկիր կամ արտահանում երկրից կամ անօրինական կերպով պահում է, բացի 36-րդ հոդվածում նշված նպատակներից, 1-3 աղյուսակներում նշված նյութեր կամ պատրաստուկներ, ենթակա է 6-12 տարվա ազատազրկման և տուգանքի՝ 50.000- 5.000.000 էսկուդո»:
Հոդված 52
«1. Հետաքննիչը, որը նախնական քննության ընթացքում և առանց իր ինքնությունը բացահայտելու կամ անձամբ, կամ երրորդ անձի միջոցով ընդունում է թմրանյութի կամ այլ հոգեմետ նյութերի առաջարկ, ենթակա չէ պատասխանատվության նման արարքի համար»:

Նման գործողության մասին զեկույցը կցվում է գործին՝ առավելագույնը 24 ժամվա ընթացքում»:

24. Այժմ թմրանյութերի առևտրին վերաբերում է 1993թ. հունվարի 22-ի թիվ 15/93 օրենքի ուժ ունեցող հրամանագիրը: Թիվ 430/83 օրենքի ուժ ունեցող հրամանագրի 52 հոդվածը, առանց նյութական փոփոխության, վերարտադրված է նոր հրամանագրի 59 հոդվածում:

Բ. Քրեական դատավարության օրենսգիրքը

25. Սույն գործին վերաբերող՝ Քրեական դատավարության օրենսգրքի հիմնական դրույթները նախատեսում են.

Հոդված 126

PDF created with pdfFactory Pro trial version www.pdffactory.com

«1. Խոշտանգումների, ուժի կիրառման կամ ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման միջոցով ձեռք բերված ցանկացած ապացույց անվավեր է և անընդունելի:
2. Նման միջոցներով ձեռք բերված ապացույցը համարվում է ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման միջոցով ձեռք բերված, նույնիսկ երբ զոհը համաձայն է եղել
ա/ միջամտություն անձի՝ իր կամքն արտահայտելու ազատությանը կամ որոշում կայացնելուն՝ վատ վերաբերմունքի, վիրավորանքի, ցանկացած այլ մեթոդի, հիպնոսի միջոցով կամ դաժան կամ նվաստացուցիչ միջոցների կիրառմամբ,
...
4. Եթե ապացույցը ձեռք է բերվել այնպիսի միջոցներով, որոնք սույն հոդվածի համաձայն հանդիսանում են հանցագործություն, այն կարող է օգտագործվել միայն այն անձանց հետապնդելու համար, որոնք այդ ճանապարհով ձեռք են բերել տվյալ ապացույցը»:

Հոդված 241
«Դատախազը տեղեկացվում է հանցագործության կատարման մասին իր սեփական հետաքննության, հանցագործությունը հետաքննելու համար պատասխանատու ոստիկանական աշխատակիցների կատարած հետաքննության միջոցով, կամ եթե հանցագործության մասին հայտնվում է համաձայն հետևյալ դրույթների»:

Հոդված 242
«Նույնիսկ եթե հանցագործի ինքնությունը հայտնի չէ, հանցագործության մասին հայտնվում է մեղադրանքի մարմիններին.
ա/ ոստիկանության կողմից ցանկացած հանցագործության մասին, որը հայտնի է դարձել նրանց,
...»:

Գ. Նախադեպային իրավունքը և իրավական տեսությունը

26. Որոշակի պայմաններով Գերագույն դատարանն ընդունում է «ինֆիլտրատորների» օգտագործումը թմրանյութերի առևտրի դեմ պայքարում (1990թ. հունիսի 12-ի դատավճիռը , BMJ թիվ 398, էջ 282, 1993թ. հունվարի 14-ի դատավճիռը, Col. Jur. (STJ), 1993-I էջ 270, 1994թ. մայիսի 5, Col. Jur. (STJ), 1995-II, էջ 238, 1995թ. հուլիսի 6, Col. Jur. (STJ), 1995-II, էջ 261 և 1995թ. նոյեմբերի 2, Col. Jur. (STJ), 1995-III, էջ 218):
27. Պորտուգալիայում իրավական թեմայով գրողները (և այլ եվրոպական երկրներում) ընդհանուր «ինֆիլտրատոր» հասկացության մեջ տարբերակում են կատարում երկու հասկացությունների՝ «ծպտյալ գործակալի» և «սադրիչ գործակալի» միջև: Առաջինն անձ է, ով սահմանափակվում է տեղեկություններ հավաքելով, մինչդեռ մյուսը փաստացիորեն հրահրում է մարդկանց հանցագործության կատարման: Պորտուգալիայում, գործին առնչվող ժամանակահատվածում գործող օրենսդրության համաձայն, իրավական փորձագետները «ծպտյալ գործակալների» ձեռք բերած ապացույցները համարել են ընդունելի, սակայն, ավելի պահպանողական են եղել «սադրիչ գործակալների» ձեռք բերած ապացույցների առումով:

ՎԱՐՈՒՅԹԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ

PDF created with pdfFactory Pro trial version www.pdffactory.com

28. Պրն Տեյքսեյրա դե Կաստրոն դիմել է Հանձնաժողով 1994թ. հոկտեմբերի 24-ին: Հիմնվելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի վրա՝ նա պնդել է, որ խախտվել է արդար դատաքննության իր իրավունքը, քանի որ իրեն հանցագործություն կատարելուն հրահրել են ոստիկանության աշխատակիցները, որի համար էլ ինքը դատապարտվել է: Ըստ նրա՝ այդ հանգամանքները հանդիսանում են նաև 3-րդ և 8-րդ հոդվածների խախտում, քանի որ, ի լրումն, իր նկատմամբ դրսևորվել է խտրական վերաբերմունք, ինչն արտահայտվում է նրանում, որ իրեն նշանակվել է ծանր պատիժ, մինչդեռ գործում ներգրավված մյուս անձինք կամ չեն հետապնդվել, կամ նրանց նշանակվել է թեթև պատիժ:

29. 1996թ. հունիսի 24-ին Հանձնաժողովը գանգատն ընդունելի է հայտարարել այն մասով, որը վերաբերում էր դատավարության արդարացիությանը. մնացած մասով գանգատն անընդունելի է հայտարարվել: 1997թ. փետրվարի 25-ի իր զեկույցում (31-րդ հոդված) Հանձնաժողովը կարծիք է հայտնել, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում (տասներեք ձայնով՝ ընդդեմ մեկի):

ԴԱՏԱՐԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԸ

30. Դատարանին ուղղված բացատրություններում Կառավարությունը խնդրել է «վճռել, որ սույն գործում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել»:

1. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԽԱԽՏՈՒՄ

31. Պրն Տեյքսեյրա դե Կաստրոն գանգատվել է, որ ինքը զրկվել է արդար դատաքննությունից, քանի որ իրեն հանցագործություն կատարելուն դրդել են ծպտյալ ոստիկանները, որի համար ինքը դատապարտվել է: Նա հիմնվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի վրա, որի համապատասխան հատվածը նախատեսում է.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են ... նրա դեմ ցանկացած քրեական մեղադրանք, իրավունք ունի արդար դատաքննության ... ժամկետում ... դատարանի կողմից»:

Նա նշել է, որ ինքը նախկինում չի ունեցել դատվածություն և երբեք չէր գործի այդ հանցագործությունը, եթե չլիներ «սադրիչ գործակալների» միջամտությունը: Ի լրումն, ոստիկանության աշխատակիցները գործել են իրենց սեփական նախաձեռնությամբ՝ առանց դատարանների վերահսկողության և առանց որևէ նախնական հետաքննության առկայության:

32. Կառավարությունը նշել է, որ մեծ թվով պետություններ, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններն ընդունում են հետաքննչական որոշակի միջոցների օգտագործումը, մասնավորապես, թմրանյութերի առևտրի

PDF created with pdfFactory Pro trial version www.pdffactory.com

դեմ պայքարում: Հասարակությունն ստիպված է գտնել որոշակի մեթոդներ՝ նման բնույթի հանցավոր գործունեությունը կանխելու համար, որը խարխլում է ժողովրդավարական հասարակությունների հիմքերը: Թիվ 430/83 օրենսդրական հրամանագրի 52-րդ հոդվածը, որը կիրառելի է սույն գործի փաստերի նկատմամբ, և, անշուշտ, Թմրանյութերի և հոգեմետ նյութերի ապօրինի առևտրի դեմ 1988թ. կոնվենցիայի և Հանցագործություններից ստացված միջոցների լվացման, առգրավման և բռնագրավման մասին Եվրոպայի խորհրդի 1990թ. կոնվենցիան թույլատրում են ծպտյալ գործակալների օգտագործումը, որոնց դերը, այնուամենայնիվ, ոչ մի ընդհանուր կապ չունի «սադրիչ գործակալների» հետ: Ավելին, Քրեական դատավարության օրենսգրքի 126 հոդվածի 1-ին և 2(a) կետերը սահմանում են բարձր չափորոշիչներ, որոնք պետք է բավարարվեն, եթե ապացույցների ձեռքբերման միջոցները համարվեն լեգիտիմ և օրինական:

Սույն գործում ներգրավված երկու ոստիկանները չէին կարող բնութագրվել որպես «սադրիչ գործակալներ»: Տարբերակում պետք է կատարվի այն դեպքերի միջև, երբ ծպտյալ գործակալների գործողությունները հանգեցրել են հանցավոր դիտավորության, որը նախկինում գոյություն չի ունեցել, և երբ հանցագործն արդեն հակված է եղել հանցագործություն կատարելու: Սույն գործում ոստիկանները պարզապես բացահայտել են թաքնված, նախապես գոյություն ունեցած հանցավոր մտադրություն՝ պրն Տեյքսեյրա դե Կաստրոյին հնարավորություն տալով իրացնելու այդ մտադրությունը: Ֆ. Օ.-ն (հանցակիցներից մեկը) դիմողի վրա ճնշում չի գործադրել, դիմողն անմիջապես հետաքրքրություն է ցուցաբերել թմրանյութերի ձեռքբերման և գործարքի մեջ մտնելու հարցում: Ի լրումն, դիմողին ձերբակալելու պահին

PDF created with pdfFactory Pro trial version www.pdffactory.com

նրա մոտ եղել է ավելի մեծ քանակությամբ թմրանյութ, քան «գնորդները» խնդրել էին:

Վերջապես, դատավարության ընթացքում պրն Տեյքսեյրա դե Կաստրոն հնարավորություն է ունեցել հարցաքննելու երկու ոստիկաններին և մյուս վկաներին ու վիճարկել նրանց փաստարկները: Գերագույն դատարանն իր դատավճիռը հիմնավորել է ոչ միայն ոստիկանների միջամտությամբ, այլ նաև այլ ապացույցներով: Ոչ մի հիմք չկա ենթադրելու, որ արդարացի դատավարությունը խաթարվել է:

33. Հանձնաժողովը գտել է, որ հանցագործությունը կատարվել է, և դիմողը դատապարտվել է ծանր պատժի՝ հիմնականում, եթե ոչ բացառապես, ոստիկանության աշխատակիցների գործողությունների շնորհիվ: Հետևաբար, ոստիկանները հրահրել էին քրեական գործունեություն, որն այլապես տեղի չէր ունենա: Այս իրավիճակն ազդեցություն է ունեցել դատավարության արդարացիության վրա:

34. Դատարանը կրկնում է, որ ապացույցների ընդունելիության հարցը հիմնականում ներպետական օրենսդրությամբ կարգավորվող հարց է և, որպես ընդհանուր կանոն, ներպետական դատարաններն են գնահատում իրենց ներկայացված ապացույցները: Համաձայն Կոնվենցիայի՝ Դատարանի խնդիրն է ոչ թե որոշել՝ թե արդյոք վկայի ցուցմունքը ճանաչել ապացույց, այլ դատավարությունը՝ որպես ամբողջություն, ներառյալ՝ ապացույց ձեռք բերելու միջոցը, արդարացի է (տես՝ inter alia, Վան Մեխելենը և այլոք ընդդեմ Նիդեռլանդների 1997թ. ապրիլի 23-ի վճիռը որոշումների և վճիռների ժողովածու, 1997թ. էջ 711,կետ 50):

35. Մասնավորապես, Կոնվենցիան չի արգելում քրեական գործի վարույթի հետաքննության փուլում, երբ պահանջում է հանցագործության բնույթը,

PDF created with pdfFactory Pro trial version www.pdffactory.com

այնպիսի աղբյուրների օգտագործումը, ինչպիսիք անանուն տեղեկատուներն են: Այնուամենայնիվ, այլ խնդիր է նրանց վկայությունների հետագա օգտագործումը դատարանի կողմից մեղադրյալին մեղավոր ճանաչելիս (տես՝, mutatis mutandis, Կոստովսկին ընդդեմ Նիդեռլանդների 1998թ, նոյեմբերի 20-ի վճիռը: Շարքեր Ա, թիվ 166, էջ 21, կետ 44):

36. Ծպտյալ գործակալների օգտագործումը պետք է սահմանափակվի և պետք է երաշխիքներ նախատեսված լինեն նույնիսկ թմրանյութերի առևտրի դեմ պայքարին վերաբերող գործերում: Թեև կազմակերպված հանցավորության աճը, անկասկած, պահանջում է համապատասխան միջոցների ձեռնարկում, արդարադատության արդարացի իրականացումը, այնուամենայնիվ, էական տեղ է զբաղեցնում (տես՝ Դելկորտն ընդդեմ Բելգիայի 1970թ. հունվարի 17-ի վճիռը: Շարքեր Ա, թիվ 11, էջ 15, կետ 25), ինչը չի կարող զոհաբերվել հանուն նպատակահարմարության: 6-րդ հոդվածում ամրագրված՝ արդարացիության ընդհանուր պահանջները կիրառվում են բոլոր տեսակի քրեական հանցագործությունների վերաբերյալ դատավարությունների նկատմամբ՝ ամենաանշաններից մինչև ամենախճճվածը: Հասարակական շահը չի կարող արդարացնել ոստիկանների հրահրման արդյունքում ձեռք բերված ապացույցի օգտագործումը:

37. Դատարանը նշում է, որ, առաջին՝ սույն գործը տարբերվում է Լյուդին ընդդեմ Շվեյցարիայի գործից, որում գործում ներգրավված ոստիկանության աշխատակիցները երդում են տվել, քննող դատավորը տեղյակ չի եղել նրանց առաքելությանը, և շվեյցարական իշխանությունները՝ տեղեկացված լինելով գերմանական ոստիկանության կողմից, սկսել են նախնական քննություն:

PDF created with pdfFactory Pro trial version www.pdffactory.com

Ոստիկանության աշխատակիցների դերը սահմանափակվել է ծպտյալ գործակալի դերով:

38. Սույն գործում, անհրաժեշտ է որոշել՝ թե արդյոք երկու ոստիկանների գործունեությունը դուրս է եկել ծպտյալ գործակալների գործունեության շրջանակներից: Դատարանը նշում է, որ Կառավարությունը չի առարկել, որ ոստիկանների միջամտությունը տեղի է ունեցել որպես թմրանյութերի առևտրի դեմ պայքարի միջոցառումների մաս և վերահսկվել է դատավորի կողմից: Չկա վկայություն նաև առ այն, որ իրավասու մարմինները հիմք են ունեցել կասկածելու, որ պրն Տեյքսեյրա դե Կաստրոն թմրանյութերի առևտրական էր, ընդհակառակն, նա չի ունեցել որևէ դատվածություն և նրա առնչությամբ նախնական հետաքննություն չի նախաձեռնվել: Անշուշտ, նրա մասին հայտնի չի եղել ոստիկաններին, որոնք նրա հետ կապ են հաստատել Վ.Ս.-ի և Ֆ.Օ.-ի միայն միջնորդությամբ (տես՝ վերը՝ կետ 10):

Ավելին, թմրանյութը դիմողի տանը չի եղել, նա դրանք ձեռք է բերել երրորդ անձից, որն էլ իր հերթին այն ձեռք է բերել մեկ ուրիշից (տես՝, կետ 11): Գերագույն դատարանի 1994թ. մայիսի 5-ի դատավճիռը չի նշում նաև, որ ձերբակալման ժամանակ դիմողի մոտ հայտնաբերվել է ոստիկանների պահանջած քանակությունից ավելին: Չկա նաև ապացույց ի պաշտպանություն Կառավարության այն փաստարկի, որ դիմողը նախապես հակված է եղել հանցագործություններ կատարելու: Այս հանգամանքներից բխող անհրաժեշտ հետևությունն այն է, որ երկու ոստիկանները չեն սահմանափակել պրն Տեյքսեյրա դե Կաստրոյի քրեական գործողությունը՝ հիմնականում պասիվ ձևով հետաքննելով, այլ գործել են ազդեցություն, այն է՝ դրդել են հանցագործություն կատարելուն:

PDF created with pdfFactory Pro trial version www.pdffactory.com

Ի վերջո Դատարանը նշում է, որ իրենց որոշումներում ներպետական դատարանները նշել են, որ դիմողը մեղավոր է ճանաչվել հիմնականում երկու ոստիկանների ցուցմունքների հիման վրա:

39. Ելնելով այս դատողությունից՝ Դատարանը եզրակացնում է, որ երկու ոստիկանների գործողությունները դուրս են եկել ծպտյալ գործակալների գործողությունների շրջանակից, քանի որ նրանք հրահրել են հանցագործությունը, և չկա որևէ վկայություն այն բանի, որ առանց նրանց միջամտության հանցագործությունը տեղի կունենար: Այդ միջամտությունը և դրա օգտագործումը վիճարկվող քրեական վարույթում նշանակում է, որ դիմողը որոշակիորեն զրկվել է արդարացի դատաքննությունից: Հետևաբար, տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

II. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի վիճարկվող խախտում

40. Հանձնաժողովին ուղղված իր գանգատում դիմողը նշել է, որ խախտվել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածը, որն արգելում է «անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքը կամ պատիժը»:

41. Դատարանը նկատում է, որ ոչ դիմողը, ոչ Կառավարությունը, ոչ Հանձնաժողովի պատվիրակն այս կապակցությամբ որևէ փաստարկ չեն ներկայացրել: Դատարանը որևէ հիմք չի գտնում այս հարցն իր նախաձեռնությամբ քննության առնելու համար:

III. Կոնվենցիայի 8-րդ հոդվածի վիճարկվող խախտում

42. Պրն Տեյքսեյրա դե Կաստրոն պնդել է, որ վիճարկվող հանգամանքները հանդիսանում են Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում: Այդ հոդվածը նախատեսում է.

PDF created with pdfFactory Pro trial version www.pdffactory.com

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

43. Հաշվի առնելով 39-րդ կետում նշված եզրահանգումը՝ Դատարանը, ինչպես Հանձնաժողովը, անհրաժեշտ չի համարում այդ գանգատն առանձին քննության առնել 8-րդ հոդվածի հիման վրա:

IV. Կոնվենցիայի 50-րդ հոդվածի կիրառումը

44. Կոնվենցիայի 50-րդ հոդվածը նախատեսում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ Բարձր պայմանավորվող կողմի իրավական կամ այլ մարմնի ընդունած որոշումը կամ որևէ այլ միջոցառում լրիվ կամ մասամբ հակասում է Կոնվենցիայից … բխող պարտավորություններին, և եթե այդ կողմի ներպետական օրենսդրությունը նախատեսում է այդ որոշման կամ միջոցառման հետևանքների դիմաց միայն մասնակի փոխհատուցում, վնաս կրած անձին Դատարանի վճռով, անհրաժեշտության դեպքում, տրամադրվում է արդարացի բավարարում»:

45. Դիմողը պահանջել է հատուցում՝ նյութական և ոչ նյութական վնասի դիմաց, և իր ծախքերի ու ծախսերի փոխհատուցում:

Ա. Վնասը

46. Պրն Տեյքսեյրա դե Կաստրոն առաջին հերթին պահանջել է 2.052.000 էսկուդո (PTE)՝ այն երեք տարիների ընթացքում իր վաստակի կորստի դիմաց, որոնք նա իր վեցամյա ազատազրկման ժամկետից անց է կացրել բանտում: Իր այս պահանջը նա հիմնավորել է նրանով, որ երկու ոստիկանների միջամտության բացակայության դեպքում ինքը չէր դատապարտվի: Ինչպես Գերագույն դատարանը նշել է իր 1994թ. մայիսի 5-ի դատավճռում՝ նրա ամենամսյա աշխատավարձը 57.000 PTE է: Նա նաև պահանջել է 15.000.000 PTE իր վաստակի կորստի համար, քանի որ բանտից ազատվելուց հետո նա հեռացվել է աշխատանքից և թմրանյութեր վաճառողի պիտակավորման պատճառով չի կարողացել աշխատանք գտնել: Դիմողը պահանջել է նաև 5.000.000 PTE՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում: Հաշվի առնելով այն փաստը, որ ինքը գտնվել է բանտում և դրա արդյունքում չի ունեցել որևէ վաստակ, նրա կինն ու որդին ստիպված են եղել քաղցելու և ինքն ապրել է մեծ անհանգստություն: Իր դատապարտումից ի վեր նրա կյանքը եղել է նվաստացումների շարք. նա կորցրել է ընկերների և նրանից օտարացել են իր ընտանիքի անդամները:

47. Կառավարությունը վիճարկում է, որ չկա որևէ պատճառական կապ վիճարկվող վնասի և արձանագրված իրավախախտման փաստի միջև, քանի որ հնարավոր չէ ենթադրություններ անել, թե դիմողի վիճակը կլիներ արդյոք այլ, եթե խախտված չլիներ նրա իրավունքը: Ըստ Կառավարության՝ իրավունքի խախտման փաստի ճանաչումն ինքնին հանդիսանում էր ոչ նյութական վնասի հատուցում:

PDF created with pdfFactory Pro trial version www.pdffactory.com

48. Հանձնաժողովի պատվիրակը կարծիք է հայտնել, որ պահանջվող նյութական և ոչ նյութական վնասի դիմաց հատուցում պետք է վճարվի, եթե Դատարանը գտնի, ինչպես Վինդիշն ընդդեմ Ավստրիայի գործում (տես՝ 1990թ. սեպտեմբերի 27-ի վճիռը: Շարքեր, Ա թիվ 186, էջ 12, կետ 35), որ դիմողի դատապարտումն ուղղակիորեն եղել է 6-րդ հոդվածի հետ անհամատեղելի ապացույցի օգտագործման հետևանք:
49. Դատարանը համամիտ էր այդ կարծիքին: Գործում առկա փաստաթղթերը վկայում են, որ ազատազրկման ձևով պատիժ չէր նշանակվի, եթե չլիներ երկու ոստիկանների միջամտությունը: Պրն Տեյքսեյրա դե Կաստրոյի վաստակի կորուստը՝ և՛ ազատազրկված լինելու ընթացքում, և՛ բանտից ազատվելուց հետո աշխատանք չգտնելու հետևանքով, փաստացի էին (չեն վիճարկվել Կառավարության կողմից) և նրան իրավունք են տալիս ստանալու արդարացի բավարարում: Նմանապես, անվիճելի է, որ դիմողը կրել է ոչ նյութական վնաս, որը չի կարող հատուցվել պարզապես իրավախախտման փաստը ճանաչելով: Հաշվի առնելով համապատասխան գործոնները և հարցը լուծելով արդարության հիմքերով՝ 50-րդ հոդվածի համաձայն Դատարանը նյութական և ոչ նյութական վնասի դիմաց տրամադրում է 10.000.000 PTE:

Բ. Ծախսեր և ծախքեր

50. Ըստ Տեյքսեյրա դե Կաստրոյի՝ իր կրած ծախսերն ու ծախքերը ներառում են.
ա/ 5.000.000 PTE՝ Պորտուգալիայի դատարաններում գործի քննության կապակցությամբ՝ նկատի ունենալով, որ Պորտուգալական պետության կողմից վճարվել է միայն 35.000 PTE՝ որպես իրավաբանական օգնություն,
բ/ 1.500.000 PTE՝ Հանձնաժողովում և Դատարանում՝ գործի վարույթի համար:
51. Ըստ Կառավարության՝ դիմողի պահանջներն արդարացված չեն:
52. Հանձնաժողովի պատվիրակի կարծիքով, ի լրումն այն գումարների, որը դիմողն ստացել է որպես իրավաբանական օգնություն, նրան պետք է տրամադրվի որոշակի գումար՝ Կոնվենցիայի մարմիններում վարույթների կապակցությամբ:
53. Դատարանը նշում է, որ գործին առնչվող ժամանակահատվածում դիմողի փաստաբանը համաձայնել է հանդես գալու պարզապես իրավաբանական օգնության իրավաբանական համակարգի համաձայն՝ Պորտուգալիայի իշխանությունների կողմից վճարված գումարով: Նման հանգամանքներում, անձը, ում շահերը նա ներկայացրել է, պարտավոր չէ նրան վճարել լրացուցիչ հոնորար (տես՝ վերը նշված Վինդիշի վճիռը, էջ 13, կետ 37): Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ որպես իրավաբանական օգնություն վճարված գումարը չնչին է, և փաստաբանը կատարել է էական ծավալի աշխատանք՝ Դատարանը, հարցը լուծելով արդարության հիմքերով, դիմողին տրամադրում է 300.000 PTE՝ Պորտուգալիայում կրած ծախսերի և ծախքերի դիմաց:
54. Պրն Տեյքսեյրա դե Կաստրոն նաև իրավաբանական օգնություն է ստացել Կոնվենցիայի մարմիններում: Դատարանը չի գտնում, որ Ստրասբուրգում գործի քննության կապակցությամբ կատարված ծախսերի և ծախքերի դիմաց պահանջված գումարները չափազանցված են: Հետևաբար, Դատարանն այս կապակցությամբ տրամադրում է 1.500.000 PTE, որից հանվում է 19.801.70 ֆրանկ, որն արդեն ստացվել է որպես իրավաբանական օգնություն:

Գ. Տոկոսներ չվճարելու դեպքում

PDF created with pdfFactory Pro trial version www.pdffactory.com

55. Դատարանին հայտնի տեղեկատվության համաձայն՝ սույն վճռի կայացման պահին Պորտուգալիայում օրենքով սահմանված տոկոսադրույքը տարեկան 10 տոկոս է:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

1. Վճռում է՝ վեց ձայնով ընդդեմ մեկի, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում,
2. Վճռում է՝ միաձայն, որ անհրաժեշտություն չկա քննության առնելու, թե արդյո՞ք խախտվել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածը,
3. Վճռում է՝ միաձայն, որ անհրաժեշտություն չկա գործը քննության առնել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի հիման վրա,
4. Վճռում է՝ ութ ձայնով՝ ընդդեմ մեկի, որ.
ա/ պատասխանող պետությունը պետք է դիմողին եռամսյա ժամկետում վճարի հետևյալ գումարները.
(i)10.000.000 (տասը միլիոն) էսկուդո՝ նյութական և ոչ նյութական վնասի դիմաց,
(ii) 1.800.000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) էսկուդո՝ ծախսերի և ծախքերի համար՝ հանած 19.801.70 (տասնինը հազար ութ հարյուր մեկ և յոթանասուն սանտիմ) ֆրանսիական ֆրանկ, որը ենթակա է փոխակերպման էսկուդոյի՝ հարցի լուծման ժամանակ գոյություն ունեցող տարադրամի կուրսով, և
բ/ պետք է վճարվի տոկոս՝ տարեկան 10 տոկոս տոկոսադրույքով, պետք է վճարվի տոկոս, վերոհիշյալ եռամսյա ժամկետի լրանալուց հետո մինչև արդարացի բավարարման վճարումը,
5. Մերժում է՝ միաձայն, արդարացի բավարարման վերաբերյալ պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով և ֆրանսերենով, հրապարակված է Մարդու իրավունքների պալատում՝ դռնբաց նիստում, Ստրասբուրգում, 1998թ. հունիսի 9-ին:

Ռուդոլֆ Բերնհարդտ
Նախագահ

Հերբերտ Պետցոլդ
Քարտուղար

Կոնվենցիայի 51-րդ հոդվածի 2-րդ կետի և Դատարանի B կանոնակարգի 55-րդ կանոնի 2-րդ կետի համաձայն պրն Բուտկևիչի հատուկ կարծիքը կցվում է սույն վճռին:

ԴԱՏԱՎՈՐ ԲՈՒՏԿԵՎԻՉԻ ՉՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

Ես ցավում եմ, որ չեմ կարող համաձայնել սույն վճռին: Ես պատրաստ եմ կիսելու այն մտավախությունը, որ ոստիկանության չքույլատրված գործողությունները, նույնիսկ եթե դրանք ունեն ազնիվ մտադրություն, կարող են հանգեցնել մարդու իրավունքների խախտման ածի: Եթե անհատի իրավունքներն ու ազատությունները դիտենք հասարակության՝ որպես ամբողջության, իրավունքներից և ազատություններից անջատ, եզրահանգումը կլինի հօգուտ անհատի: Սակայն, հաշվի առնելով, որ որոշ

PDF created with pdfFactory Pro trial version www.pdffactory.com

իրավունքներ և ազատություններ չեն կարող դիտվել առանձին, քանի որ դրանք բացարձակ իրավունքներ չեն, հասարակության այլ անդամների իրավունքների պաշտպանության համար նախատեսված իրավունքները կարող են վեր դասվել անհատի իրավունքներից:

Անհրաժեշտ է առավել ուշադիր լինել այս հավասարակշռությունը դիտարկելիս, երբ խոսքը վերաբերում է հասարակությանն սպառնացող վտանգին, օրինակ՝ շահույթ ստանալու նպատակով մարդու օրգանների փոխպատվաստմանը, մարդկանց առևտրին, հարկադրված մարմնավաճառությանը, ահաբեկչությանը, զանգվածային ոչնչացման զենքերի բաղադրամասերի և թմրանյութերի առևտրին:

Սույն գործում դիմողն իմացել է, որ ինքը հանցագործություն է կատարում: Այն փաստը, որ նա չի իմացել, որ թմրանյութ գնել ցանկացող անձինք ոստիկաններ են, չի փոխում գործի բնույթը:

Այն փաստարկը, որ «ծպտյալ գործակալները» գործել են որպես «սադրիչ գործակալներ», inter alia, համոզիչ չէ սույն գործում: Ներպետական դատարաններում գործի փաստաթղթերում առկա այն արտահայտության վրա հիմնվելը, որ «նույնիսկ եթե նրանք սադրիչ գործակալներ էին», չի նշանակում, որ նրանք «սադրիչներ» էին: Ցանկացած հասարակությունում առանց համապատասխան թույլտվության թմրանյութ վաճառող անձը պետք է գիտակցի, որ ինքը կարող է վնաս պատճառել երրորդ անձի: Ավելին, նրա համար դժվար չէ մյուս անձին մեղադրել «սադրիչ» լինելու համար՝ որպես իր հանցագործության մասնիկ: Բացի դրանից, օրենսդրությունը թույլատրում է «ծպտյալ գործակալների» օգտագործումը:

Ըստ իս, նաև գործում առկա փաստաթղթերը ոչ երկիմաստ չէին, քանի որ ներպետական դատական մարմիններն իրենց որոշումները հիմնում էին բացառապես ոստիկանների ցուցմունքների վրա:

Ես համաձայն եմ այն դատական որոշումներին, որոնք հիմնվում են Հանձնաժողովի կողմից հաստատված փաստերի վրա: Այնուամենայնիվ, ես չեմ կարող պաշտպանել այս որոշումների հիմնավորումը, քանի որ կասկածում եմ սույն փաստաթղթերի որակումներին:

PDF created with pdfFactory Pro trial version www.pdffactory.com

PDF created with pdfFactory Pro trial version www.pdffactory.com

PDF created with pdfFactory Pro trial version www.pdffactory.com